

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ԻՄ ՈՒԽՏ ԹԱԴԷԻ ՎԱՆՈՒՑ.

«Հայրատունկ այգուն հրեղէն պարիսպը
և բարձր աշտարակը, ոսկեղէն բաժակը և
ժիր մատուռակը Հայաստանեայց Հայր հո-
գևոր Բարդուղիմէոս և Թադէոս».

Շարական.

Ո՛ր տայր ինձ թե, թե Արծուոյ,
Որ թռչէի և երթայի
Ես ի յԱրտազ և Շաւարշան,
Սուրբ Թադէի վանք հասնէի,
Ուր վեհագոյն տաճարին մէջ
Հանգչին ոսկերք սուրբ Թադէի:
Եւ մօտ վանուց մի ասպարէզ
Կայ մի մատուռ փոքրիկ անշուք,
Անդ կայ տապան հանգստարան
Սուրբ նահատակ կուսին Սանդուխտ:

Ես ուխտ ունիմ, ուխտս ի՞նչ վաղուց.
Ո՛հ, չկարեմ կատարել ուխտս.
Ես ծերացել եմ, ծերացել.
Վասպուրական Արծունի երբեմն
Արդ թեաթափ է եղել:
Ես կաշկանդուել եմ, կաշկանդուել
Առանց կապի և շղթայի.
Հոգածութիւն հօտին խմոյ
Սիրտս ու հոգիս է պաշարեր.
Պարտուցս բեռն է ծանր ու ծանր.
Ո՛հ, չը կարեմ զայն վճարել:
Որ խաչակիր ուխտադիր է,

Եւ որ յուսայ և հաւատայ,
Միթէ կարէ նա կաշկանդիլ,
Թէ կաշկանդի մարմին տկար,
Հոգին ու միտք թռչին ազատ:

Թռիր, հոգի իմ սիրավառ,
Սլացիր իջիր թաղէի վանք,
Մտիր ի մութ անլոյս տաճար,
Վառէ քո մոմ, որ դու տեսնես
Ո՞ւր է տապան մեր թաղէին՝
Հայոց նախկին Լուսաւորչին:
Զոգիր ի ծունկ և աղօթէ,
Թափէ արտասունք վէր տապանին:
Դու բարեխօս բռնէ թաղէն՝
Վասն Հայոց մեր աշխարհին,
Եւ չարչարուած ժողովուրդին:
Համբուրելով այն սուրբ շիրիմ,
Ա՛ռ քո փափագ անձկալից:

Սուրբ տապանէն ձայն մի հնչեց.
Զայն բողոք էր իրաւացի,
Եւ սրտառուչ դառն տրտունջ:
Թաղէն խօսեց գերեզմանէն.
Հարցուց ինձ բան, թէ ո՞վ ես դու:
Ասի Հայոց Հայրիկն եմ ես.
Եւ անարժան Կաթողիկոս
Համայն Ազգին մեր Արամեան,
Սուրբ Աթոռիդ Աթոռակալ:
Ասաց թաղէն թէ առաքեալ
Աշխրիս վէրէն Աթոռ ունի.
Ունիմք աթոռ միայն յերկինս,
Զոր խոստացել է մեր Փրկիչ.
Ո՞վ է հնարեր այդ օտար բան:
Միթէ այսպէս ուսոյց Քրիստոս,
Աթոռ դնել Մայրաքաղաք,
Ինչպէս թաղւոր և դահակալ,

Որք տիրապետ են աշխարհիս։
 Մերթ ևս ձգտել այնչափ յառաջ,
 Մինչև ի Սիս և Աղթամար,
 Տիրապետել այլոց վիճակ.
 Ինչպէս գրէ առ երիցունս,
 Եղբայր Պետրոս երիցագոյն,
 Մեր հոգևոր խոնարհ պաշտօն
 Ընդարձակել զերթ Պետութիւն։
 Ի Քրիստոսէն չառինք պատուէր
 Աշխարհավար լինել հօտին,
 Այլ սոսկ միայն Աւետարան
 Է մեր քարոզ և մեր պաշտօն,
 Եւ Քրիստոսի եկեղեցւոյն
 Պարզ հոգևոր տնտեսութիւն.
 Լինել հովիւ քաջ և արթուն,
 Հսկել հօտին հաւատացեալ։
 Եւ ինչ է այն. Աթոռ, Պթոռ,
 Եւ Մայր Աթոռ Արարատեան,
 Վեհափառ և Վեհարան,
 Էջմիածին, Էջմիածին,
 Լուսաւորիչ, Լուսաւորիչ,
 Իսկ Թաղէի համար ոչինչ։

Ուստի էր լոյս Լուսաւորչին.
 Լոյս ծագեցաւ յերուսաղէմ,
 Ես լոյս առի, լոյս Յիսուսէն,
 Եւ լոյս տուի Լուսաւորչին,
 Մինչ նա անլոյս դեռ մանուկ էր.
 Լոյսն ընդունեց ի Կեսարիա,
 Եւ կրթեցաւ սուրբ հաւատով,
 Ուր առաքեալ էի արդէն,
 Քարոզելով Աւետարան,
 Ես լոյս տուի հեթանոսին։
 Թէ Թաղէոս և Թէ Գրիգոր
 Խոնարհ ծառայք են Յիսուսին.

Զի ասաց նա թէ առանց իմ
 Զկարէք առնել դուք և ոչինչ:
 Ես չեմ ժխտեր թէ Գրիգորիս
 Մեծավաստակ եղև քան զիս,
 Ողջ Հայաստան լուսաւորեց.
 Կռամուռթեան խաւար վանեց.
 Անահիտայ երկրպագուք
 Քրիստոսի Հօր երկրպագին.
 Որ աշխարհի որդիքն էին,
 Եղեն որդիք արքայութեան:

Սուրբ Սաղիմայ Սիօնի լեռնէն
 Ելայ եկայ ես Հայաստան,
 Խաչի հարօր ես հետս առի.
 Բարդուղիմէն էր լծակից.
 Զոյգ ամուլներըս լրծուելով՝
 Մենք հերկեցինք Հայոց երկիր,
 Քարոզեցինք Աւետարան
 Եւ ցանեցինք սերմնն Բանին,
 Փոխան ջրոյ դրախտին գետոց՝
 Ոռօզեցինք մեր արիւնով:

Աստուած հանեց Գրիգոր մշակ,
 Որ աճեցոյց մեր ցանած սերմն:
 Քաւ թէ նախանձ ունի թաղէն՝
 Խնչպէս որդիք աշխարհիս այս:
 Բայց դու ընդէր, ո՞վ ազգ Հայոց,
 Զիս մոռացել ես, մոռացել:
 Էջմիածին շէն ու պայծառ,
 Թաղէի վանք աւեր դարձել.
 Ո՛չ շինարար, ո՛չ վանահայր,
 Ոչ ժամ ասող, ոչ պատարագ,
 Ոչ միաբան տօնակատար,
 Ոչ ուխտաւորք դան ջերմեռանդ:

Էջմիածին ջահեր վառին,

Իսկ իմ տաճար ճրագ չունի.
 Գերեզմանիս կանթեղ շիջած,
 Զկայ լուսարար, որ վառէ զայն:
 Լոյս տուի քեզ, ով ազգ Հայոց,
 Դու իմ տաճար խաւար թողուս:
 Տաճարն իմ չէ, Աստուծոյն է,
 Զոր կանգնել են նախնի սուրբ Հարք.
 Աստուծոյ տուն մնացել անտէր,
 Եւ աղաւնիք բոյն են դրել:
 Եթէ մնայ այսպէս անշէն,
 Ո՛հ, յիշատակն իմ կորնչի,
 Եւ Հայք մոռնան ըզթագէն:
 Գնա՛, ով դու Հայոց Հայրիկ,
 Տար իմ բողոք Հայոց Ազգին,
 Պատմէ ինչ որ աչքով տեսար,
 Իմ թագէի վանուց վիճակը:
 Ես խռովեալ եմ, խռովեալ.
 Մի վրդովեր իմ գերեզման:
 Վրդովեցաւ և իմ հոգիս,
 Եւ դառնապէս լացի ուժգին.
 Ես փարեցայ սուրբ տապանին,
 Համբուրեցի, համբուրեցի,
 Ելայ տխուր ի տաճարէն:

Թողի ապա թագէի վանք,
 Գնացի մտայ փոքրիկ մատուռ
 Սուրբ նահատակ կուսին Սանդուխտ,
 Որ ի միջի վկայունեաց,
 Նա առաջին կոյս վկայն է,
 Զոր Սանատրուկ ամբարիշտ հայր՝
 Շղթայակապ մատնեց ի բանտ:

Ասեն թէ մի սլատեհ ժամու,
 Գնացել թագէն սանիկին այց,
 Համբուրել է, համբուրել
 Կուսին շղթայն սուրբ շրթունքով,
 Խրախոյս տուեր Սանդուխտ կուսին,

Աւետեր է հարսնութեան օր:
 Ես հարսնաւէր եմ՝ փեսային,
 Քո փեսայն է Յիսուս Փրկիչ,
 Առաքաստն է Լուսոյ երկինք:
 Զօրացիր դու հաւատով,
 Թող քո մարմին շղթայն պնդէ,
 Հոգիդ ազատ վերաթեւէ,
 Երթայ խառնի լոյս երամին:

Սանդուխտ սանիկ ուրախացաւ,
 Հոգին հրճուեց ու զօրացաւ,
 Թէ մօտ էր իւր հարսնութեան օր.
 Խաւար բանտէն ելնել ի լոյս,
 Երկնից խորան և հարսնէտուն,
 Որ խօսեցեալն էր հաւատով,
 Եւ հարսնածուն էր Թադէոս:
 Անդրանիկ կոյս մարտիրոս,
 Գլուխըն ծածկեց կարմիր քօղով,
 Որ տի լինէր Խաչելոյն հարսն,
 Խաչի արիւն էր զարդարանք,
 Բոսորագեղ էր հարդերձանք:

Այլ երբ մտաւ երկնուց դարպաս,
 Քօղն ի գլխէն առին հրեշտակք.
 Կուսին երես փայլեց պայծառ՝
 Ինչպէս հովտին Շաւարշանայ,
 Ծաղկեալ շուշան սպիտակափայլ:
 Որ թաղուհին էր տան Հայոց
 Սանդուխտ եղև երկնից դշխոյ:

Թադէն շղթայն համբուրեց
 Եւ ինձ մնաց կուսին տապան.
 Ես գրկեցի այն սուրբ շիրիմ,
 Համբուրեցի լի անձկանօք.
 Ասի ահա ուխտս իմ լցաւ.
 Սիրտս ու հոգիս թող մնայ աստ.

Ուխտեմ չմոռնալ մինչև ի մահ՝
Սուրբ Թադէին, Սանդուխտ կուսին
Յաւերժական այս յիշատակ:



«ՔԱՐՈՉԵԱՅ ՅԱՌԱՔԵԱԼՍՆ» ԵՒ «ՅՈՅՍ ՅԱՐՈՒԹԵԱՆ»

«Արարատի» փետրուար ամսատետրում տպուած է բարձր. Տ. Կարապետ վարդապետի մի յօդուածը «Քարոզեաց յառաքեալսն և Յոյս յարութեան» վերնագրով:

Հ. Կարապետը սխալ է համարում այժմ մեր եկեղեցում ընդունուած Հանգանակի՝ «քարոզեաց զառաքեալն» և Ս. պատարադի՝ «յոյս յարութիւն» քաւութիւն» և այլն ընթերցմունքը: Նա պնդում է՝ որ պէտք է ասել «քարոզեաց յառաքեալսն» և «յոյս յարութեան»:

Սխալ է արդեօք ինչ որ եկեղեցում կարդացւում է թէ ուղիղ՝ այդ կարող է որոշել եկեղեցին. անհատը պարտաւոր է ընդունել և խօստովանել այն՝ ինչ որ իւր եկեղեցու լրութիւնը ընդունում ու քարոզում է: Ըստ կամքս քննադատութիւն ու մեկնութիւնը շատ հեռուն կը տանի մեզ:

Թէ երբ է ընդունուել եկեղեցում «քարոզեաց զառաքեալն» ընթերցմունքը՝ ինքն Հ. Կարապետն ասում է. «մեր բոլոր տպագիր և ժէ. դարից ի վեր գրուած գրեթէ բոլոր ձեռագիր ժամագրքերի և խորհրդատետրների մէջ հանգանակի Ս. Հոգւոյ վերաբերեալ կտորն ունի «քարոզեաց զառաքեալն»:

Ուրեմն եկեղեցին աւելի քան 300 տարի է կրկնում է «քարոզեաց զառաքեալն» և իւր վարդապետութեանը համապատասխան գտնելով այդ ձևը՝ նուիրագործել է: «Քարոզեաց յառաքեալսն» կամ «զառաքեալսն» բառացի կերպով չկայ ոչ նիկիական և ոչ Կ. Պոլսոյ հանգանակի մէջ: